


№ 203
1911

Հանձն, արքաւ.
Քրիստոնէոսից յազգաւորաց
Քրիստոնէոսից
Քրիստոնէոսից

Ե

ԴԵՍՏԻՆԵՐԱԿՉԱԿԱՆ

ՅՈՐԴՈՐՆԵՐ



ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Կազմեց
ԶԱԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ



~

27411

Շ Ո Ւ Շ Ի
Տպարան Մեկրում Բարաջանեանի
1911

14 1/2 x 22

2741

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ

Յ Ո Ր Դ Ո Ր Ն Ե Ր

Խնդրում ենք նախ քան կարդալը ուղղել սպրտած հետեւեալ վրիպակները

Սխալ

Ուղիղ

էջ 3 տող 4 վերևից—հայ մարդը
» 12 » 8 ներքևից—նա է մեր
կեանքի ամենալուրջ և դժւարին
խնդիրները

հայ մայրը
նա է մեր կեանքի հիմքը.
կրօնն է վճռում մեր կեանքի
ամենալուրջ և դժւարին
խնդիրները


էջ 16 տող 1 վերևից—մէնք
» 16 » 2 » ամեն

մենք
ամէն

27411

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ

Յ Ո Ր Դ Ո Ր Ն Ե Ր



Կազմեց

ԶԱԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ



Շ Ո Ւ Շ Ի

Տպարան Մեղրու Քարաջանեանի

1911



Հայ կեանքի պատմական հին յիշատակարաններում արձանագրուած է, թէ հաւածանքի, աւերի, գերութեան և բռնութեան տարիներում հայ մարգը—երբ զբլուխը խոնարհած իւր մանկան վրայ օրօր էր ասում արտասուքն աչքերին—խոր և դառն վշտի կակիծով լցուած գլխիկոր մըրմընջում էր—ով Տէր Աստուած, ի՞նչ է սպասում իմ սրտի հատորին, իմ աչքի լոյս մանկան—արդեօք քաղցածութիւն, գերութիւն ու տանջանք, թէ՞ բռնաւորի սուրն ու շարաշար մահը:

Այսպէս էին մտածում հին մայրերը: Սակայն այժմ այդպէս չէ: Դարերի, ժամանակների հետ փոխուել են պայմանները, հանգամանքներն ու հասկացողութիւնները: Այժմ այնքան էլ սարսափելի և երկիւղալի չեն արտաքին թշնամիները: Բայց դոցա փոխարէն ծնուել են հայ կեանքի համար այլ աւելի զարհուրելի և փտանգաւոր թըշնամիներ, միմեանց հակասող և հակառակ հասկացողութիւններ, բարոյական գաղափարների խառնաշփոթութիւն և այլն, և շատ մայրեր, ինչպէս հնում, այժմ էլ ստիպուած պէտք է մտածեն իրենց սիրասուն գաւակների համար—թէ ի՞նչ է սպա-

սուժ նոցա ապագայում, ի՞նչպիսի պատահարների պիտի ենթարկուին նոքա, ինչպիսի հոսանքների գոհ դառնան, ինչ կրթութութիւն և դաստիարակութիւն ստանան. սակայն ցաւերով պէտք է յիշել, որ մեր այժմեան հայրերն ու մայրերը ոչ միայն ժամանակ չունին նման բաների մասին մտածելու, այլ և իրենց վարած կեանքով և հասարակութեան համար ստեղծած անխուսափելի չարիք դարձած պայմաններով ամէնամիտասակար կերպով ազդում են փոքրերի վրայ և ժամանակից առաջ ներգործում ու զրկում մանկան ինքնուրոյն, շիտակ և ազատ զարգացումից:

Մանուկ սերնդի կրթութեան և դաստիարակութեան մասին մասնաւորապէս շատ է խօսուել և խօսւում է, բայց ցաւալի է յիշել, որ դժբախտաբար այդ ամէնից դաստիարակութեան, կրթութեան վերաբերեալ խրատներից մեր հոգու, մեր մտքի մէջ ոչինչ չենք պահել և պահում կամ օգտւում, ամէն ինչ մնացել և մնում է մութ, վայրիվերոյ և անորոշ: Այս կարևոր և անհրաժեշտ, բայց մեր կողմից անուշադրութեան մատնուած խնդրի նկատմամբ տեսնենք ինչ է ասել ամէնահռչակաւոր եկեղեցականներից մէկն այդ առթիւ, որ թէև հնութեան մէջ ծածկուած, դարերի և շրջան-

ների միջից է հնչւում և այն ժամանակուայ և այժմեան պահանջներն ու հանգամանքները փոխուել են—բայց ցայսօր էլ պահպանուել և մնացել է իւր թարմութեան մէջ:

Կան ծնողներ, որոնք ոչ մի միջոց չեն խնայում իրենց զաւակների ամէնահնչին բաւականութեան համար, բայց նոցա կրթութեան, դաստիարակութեան վրայ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում և այդ ուղղութեամբ ոչինչ չեն մտածում, թէև բնութիւնից որդիների դաստիարակութեան և կրթութեան վրայ հոգատարներ ամէնից առաջ նշանակուած են ծնողները, սակայն նոքա չեն արդարացնում իրենց վրայ դրած յոյսերը: Հայրեր և մայրեր, չէ՞ որ դուք էք մեղաւոր, որ ձեր զաւակները մեծանում են առանց ուղղութեան և դաստիարակութեան. չէ՞ որ դուք պէտք է ուղղութիւն տաք նոցա ցանկութիւններին, սովորեցնէք մանուկ հասակից պարտաճանաչութեան գաղափարը և ոչ թէ սպասէք, մինչև որ ծառի պէս արմատաւորուի չարիքը նրա սրտի և հոգու մէջ, որ արմատախիլ անելն արդէն դժուարանայ և նոյն իսկ անկարելի դառնայ:

Հրէաստանում Եղիա անունով մի շատ բարեպաշտ, հեզ և խոնարհ բահանայ երկու որդի ունէր, որոնք մատնուած էին ամէ-

նատեսակ յանցագործութիւնների. հայրը, սակայն, ոչ մի կերպով չէր կարողանում նրանց իւր հսկողութեան տակ պահել կամ նկատողութիւն անել. «որդիք, ձեր մասին լաւ համբաւ չեմ լսում և այդ ցանկալի չէ», ահա այն ամէնը, ինչ որ կարողանում էր ասել: Որդիները կատարում էին ներելի և աններելի յանցանքներ; հայրը շատանում էր միայն մի թեթև նկատողութիւնով. անշուշտ վերջը բարի հօր գաւակները իրենց շար արարքների գոհն են դառնում և հեղ ու խոնարհ հօր միայն արտասուքը բաժին թողնում. բայց այս տեսակի հեղութիւնն ու խոնարհութիւնը ամէնամեծ չարիք ու յանցագործութիւն է, որովհետև խեղճ գաւակները գոհ դարձան այդ հեղութեան... Այո, այն ծնողները—հայրերն ու մայրերը, որոնք չեն մտածում իրենց գաւակներին քրիստոնէական կրթութիւն տալ, բարոյական, գաղափարական սկզբունքներ դնել նոցա մատաղ սրտերում—որդեապաններ են:

Նայեցէք ձեր շուրջը և դուք կրտսնէք, որ մեր մայրերն ու հայրերն էլ բոլորովին ձեռք են վերցրել իրենց գաւակների դաստիարակութիւնից և անձնատուր եղել ժամանակի հրապուրիչ երևոյթներին և իրենք էլ ընկել այն կորստաբեր ու մահացուցիչ

հոսանքի մէջ, որի մէջ իրենց գաւակներն են. մեր հայրերն ու մայրերը իրենց գաւակների մասին մտածելիս մոռանում են իրենց ամէնամեծ պարտականութիւնը, այն է իրենց գաւակների բարոյական դաստիարակութիւնը—ամէնից շուտ և առաջ աշխատում են ապահովել նրանց չնչին, անցողական, ժամանակաւոր հանգամանքներով և պայմաններով և դժբախտաբար այդ տխուր հանգամանքներով լի ժամանակն էլ, կարծէք թէ, արդարացնում է այս և նման տեսակի երևոյթները: Ամէնքը և ամէն տեղ պնդում են, թէ մեր դարում, մեր ժամանակում իրերի և երևոյթների վրայ պէտք է նայել գործնական տեսակէտից—դժուար է հոսանքի դէմ գնալ... և իսկապէս, կեանքի նկատմամբ էլ մեր ունեցած աշխարհայեացքը փոխուել է: չքաւորութիւնն արդէն յանցանք է համարւում. դրամ չունենալ այժմ շատ մարդկանց կարծիքով նշանակում է ոչնչութեան հաւասարուել. համեստ, բարի լինել—նշանակում է խեղճ ու անճարակ մնալ. խաղաղութիւն և համերաշխութիւն գերադասել—նշանակում է ստրկանալ և այլն և այլն:

Սակայն յոյս ունենք, որ մարդու մէջ առողջ միտքը չի մեռել. վերջնականապէս, որ մարդու սիրտն այնքան չի ապականուել,

որ նրա մէջ մեռած լինին բոլոր բարձր, սուրբ և բարի զգացմունքները, որ այնտեղ մնացել են դեռ մարդկային արժանապատուութեան կայծեր:

Մեր ցանկութիւնը չէ դատապարտել ծնողներին, որ իրենց զաւակների նիւթական ապահովութեան համար են մտածում. բայց կրկամենայի մեծ բարոյախօսի խօսքերն ուղղել ամէնքին, որ հարստութիւնը, փողը երբէք զբաւական չեն, որ ձեր որդիները կապրեն ուրախ, բախտաւոր և երջանիկ: Ենթադրենք դուք ձեռք էք բերել նոցա համար մեծ հարստութիւն, բայց եթէ նոքա այդ հարստութիւնը պահպանելու, շահեցնելու շնորհք և կարողութիւն չունենան—երկար չի տևի և այդ հարստութիւնը կը դառնայ նոցա համար ամէնավատ դժբախտ ժառանգութիւնը: Չեր զաւակները կը լինեն բաւական հարուստ, եթէ ձեզանից կը ստանան լաւ դաստիարակութիւն բարքերի, վարքի ուղղում... աշխատեցէք ուրեմն, ոչ թէ տալ նոցա ամէնից առաջ փող, հարստութիւն—ժամանակաւոր և յանցաւոր խորհուրդներ, այլ աւելի ջանացէք ստեղծել նրանցից աշխատասէր, ազնիւ, բարի և շիտակ մարդիկ և քաղաքացիներ: Ըստ իս շատ խելացի են վարուում այն մայրերն ու հայրերը, որոնք իրենց զաւակների

ապագան ապահովելու համար ամէն ջանք գործ են դնում տալ նրանց հիմնաւոր կրթութիւն, քրէստոնէական բարոյական դաստիարակութիւն: Այդ է ամէնագոյնի և ամէնաուղիղ ճանապարհը: Այս լուսաւոր միտքը, հասկացողութիւնն էլ խաւարում, մթնում է, երբ այդ ուսումնն տալը ևս անուում է յետին մտքերով, միայն փող վաստակելու կամ լաւ ու փայլուն պաշտօններ ձեռք բերելու համար:

Ամէն ինչ, զրամ, մեծամեծ պաշտօններ, փառք և այլն դաստիարակութեան նկատմամբ երկրորդական նշանակութիւն պիտի ունենան. ով ամէնից առաջ կը սովորի իմաստութիւն, նա և այդու ձեռք կը բերի իսկական հարստութիւն, որը և գերադասելի է ամէն տեսակ հարստութիւնից և փառքից. այնքան էլ օգտակար չէ, երբ ծնողներն իրենց զաւակներին աշխատում են տալ միայն այնպիսի ուսում, որի միջոցով քիչ թէ շատ հեշտանայ կեղծ, ժամանակաւոր հարստութիւն ձեռք բերելը... հարուստը նա չէ, ով ունի փող և կալուածներ, այլ նա, ով ոչ մի կարիք չունի: Այս համոզումը սեպհականութիւն դարձրու քո զաւակի համար, որովհետև զրա մէջն է և ամէնամեծ հարստութիւնը. չպիտի ցանկանաս որ քո որդին արտաքուստ լու-

սաւորուի և փառաւորուի, այլ ցանկացիւր և սովորեցրու նրան արհամարհել ներկայ կեանքի սին փառքն ու հրապոյժը. դրանով էլ նա կլինի յայտնի և փառաբանութեան արժանի. մի ցանկանա, որ քո որդին ապրի ժամանակաւորի, անցողականի համար, այլ յաւիտենականի, գաղափարականի, սովորեցրու նրան իմաստութիւն. բարի վարք ու բարք է պէտք, ոչ թէ սրամտութիւն և խորամանկութիւն, բարոյականութիւն՝ և ոչ թէ խօսքի ոյժ, հոգւոյ ազնւութիւն և մաքրութիւն—ոչ թէ լոկ խօսք: Այս ամէնը նրա համար չեմ ասում, որ քաջալերուի աշխարհից միանգամայն հրաժարուիլը, այլ միմիայն աշխարհի հետ չըկապուելու համար:

Այսպէս է սակայն իրականութիւնը: Երբ ծնողները ստիպում են իրենց զաւակներին զբաղուել գիտութիւններով, միշտ կշտամբում են ասելով—այս ինչ աղքատ մարդու որդին կնստարեւուզործուելով ճարտասանութեան մէջ ստացել է շատ մեծ և արդիւնաւոր պաշտօն, ձեռք է բերել մեծ կարուածք, հարուստ աղջիկ, կառուցել է հոյակապ տուն, մի խօսքով ամէնքին յայտնի անձ: Մի ուրիշն ասում է—այս ինչը սովորել է օտար լեզուներ, փայլում է թատրոններում, երեկոյթներում, ակումբներում

և ամէն տեղ... իսկ արդար, բարի, ճշմարիտ լինելու մասին ոչ որ չի մտածում, երբեմն մտածողներն էլ արհամարհանքի են արժանանում—և այսպէս հէնց սկզբից ծնողներն իրենց զաւակներին այդպիսի բաներ ներշնչելով արմատաւորում են նոցա հոգու, սրտի և մտքի մէջ ժամանակաւորը, վատը, նիւթականը, չարը և այլն. սկզբունքը կամ գաղափարը դարձնելով նոցա համար արծաթսիրութիւն և փառատիրութիւն—մոլութիւններ, որոնք առանձին-առանձին կարող են ոչնչութեան մասնել մարդուն, իսկ երկուսը միասին մեռցնել, սպանել մարդու մէջ այն ամէնը, ինչ որ սուրբ է, գաղափարական, աատուածային. և դարձնել մարդու հոգին անպտուղ և անընդունակ ստեղծելու բարին, արդարը և ճշմարտիտը: Մանուկը սկզբում այնքան ոյժ և հասկացողութիւն չունի, որ կարողանայ ըմբռնել և տեսականապէս պահպանել լաւը, բարին, ուղիղը—եթէ մի քիչ էլ կարողանայ պահպանել, սակայն հէնց ծնողների անընդհատ կրկրնող խօսքերից ու արտունջներից կ'ոչընչանայ... ինչպէս մարդու մարմինը չի կարող երկար ապրել, երբ գրկուի սննդից, այնպէս էլ մարդու հոգին այդպիսի ներշնչումներով չի կարող մտածել գաղափարականի, ժարու մասին և վերջը վարակուելով չա-

րութեան և յանցագործութեան հիւանդութեամբ կրմատնուի յաւիտենական ոչնչութեան. ոչ թէ աշխարհիկ կրթութիւնն է փնասակար, այլ մարդկային մտքի հորիզոնը միայն աշխարհային, նիւթական և ժամանակաւոր ու անցողական ցանկութիւններով և նպատակներով ու յակումներով սահմանափակելը:

Մենք ամէնքս էլ շատ քիչ ենք հետաքրքրուում և աշխատում բարոյական, ճշմարիտ հաւատոյ, մարդու հոգուն սնունդ, կեանք ու կենդանութիւն աւող հիմնական գիտութիւններ ձեռք բերելով. այն կարծիքն է թագաւորում ընդհանրապէս, թէ կրօնական—բարոյական կրթութիւնը միայն հոգևոր կոչումն ունեցողները պէտք է ստանան. կարծէք թէ հաւատը կամ կրօնը մի առանձին մասնագիտութիւն է և կամ արուեստ: Ո՛չ, կրօնը կամ հաւատը չի կախուած մեր կեանքի արտաքին և պատահական երևոյթներից—այլ նա է մեր կեանքի ամէնալուրջ և զրթուար խնդիրները—նա ոչ միայն լոյս է, այլ և մեր կեանքի մութ ճանապարհները լուսաւորող—միևնոյն ժամանակ ամէնակարող ոյժ է չարիքի, գայթակղութիւնների ու անիրաւութիւնների դէմ մարդկային կեանքի ամէնամեծ նպատակներին հասնելու համար. այդ ոյժով կենդանացած ոչ միայն

ոյժեղ կամքի, մեծ խելքի և ընդունակութեան տէր մարդիկ—այլև հասարակ—սովորական պարզ կրթութիւն, ուսում չունեցողները ևս կարող են սիրոյ և զոհաբերութեան աստիճաններով բարձրանալ դէպի գաղափարականութիւն. նրա ազդեցութիւնն է, որ ընդգրկում է մարդու ամբողջ կեանքը, նրանով են պայծառանում և ամրանում մեր մասնաւոր, ընտանեկան և հասարակական կեանքի ամէնամեծ ու խոշոր նշանակութիւն ունեցող խնդիրներն ու յարաբերութիւնները: Կրօնի կամ հաւատի ոյժն աւելի կենդանի, զգալի և նշանակալից է առաւելապէս մարդկային կեանքի ծանր և դժբախտ ըրպէներում. երբ այլեկոծուում է սովորական կեանքը, երբ մեր սրտին և հոգուն մխիթարութիւն պատճառող երևոյթներն ու հանգամանքները կործանւում ու հիմնայատակ են դառնում կորցնելով իրենց նշանակութիւնը, երբ մենք երկրային ամէն տեսակ ոյժերից յոյսներս կտրած մեզանից բարձր ու հեռու մի յենարան, մի հիմք ենք ուզում փնտոել—տեսնում ենք մարդկային հոգուն մխիթարութիւն և փայլ աւող հաւատն այնտեղ բազմած... վայ նրան, ով հաւատ չունի, որովհետև երբ կեանքի ծանր հարուածները փշրեն և մոխիր դարձնեն այն հիմքը, որի վրայ օրօրում է

մարդը իւր անորոշ հասկացողութիւններով
և հայեացքներով, այն ժամանակ նա ան-
կարող է իմանալ, թէ ո՞րտեղ և ինչի՞ վրայ
ամբացնէ իւր միտքը, սիրտը, կամքը և
կեանքը: Մենք ոչ մի աշխատանք և միջոց
չենք խնայում մեր գաւազներին համար,
երբ խնդիրը վերաբերում է աշխարհայինին,
անցողականին, բայց անտարբեր ենք հա-
ւատոյ նկատմամբ—մեր գաւազներին թոյ-
լաւորում և ուղարկում ենք ամէն տեղ—
հանդէսներ, խրախճաններ, դուարձատեղեր
և այլն, այնտեղ իրենց թանկագին ժամա-
նակը վատնելու և սպանելու, բայց դպրոց
գնալու, Աստուծոյ տուն յաճախելու կամ
աղօթելու նկատմամբ անտարբեր ենք. չը-
պէտք է կարծել, թէ եկեղեցում Ս. Գրքի
ընթերցումը ձեզ և ձեր գաւազներին համար
աւելորդ բան է. նա այնտեղ լսում է ամէ-
նից առաջ—պատուիր քո հօրն ու մօրը—
պատուիրանը. մի ասիր թէ այդ ամէնը հար-
կաւոր է միայն հոգևորականին, իսկ քեզ և
քո գաւազին ոչ. պէտք չէ, որ գաւազիկ հո-
գևոր կոչում ունենայ, բայց աշխատիր, որ
նա ճշմարիտ քրիստոնեայ դառնայ, որով-
հետև Ս. Գրքի ուսումը ոչ միայն հոգևորա-
կաններին, այլ և աշխարհականներին է ան-
հրաժեշտ, ևս առաւել մանուկներին. դեռ
աստուածային ճշմարտութիւններին մաս-

նակից չեղած, արդէն գիտեն աշխարհային
ամէնատեսակ բաներ... և այսպէս անուշա-
դրութեան մասնուած մանուկներից ոչինչ
չի կարելի սպասել և նոյն իսկ զարմանալ,
երբ նոքա դառն պտուղներ տան, որովհետև
մեր ցանած սերմերի պտուղներն են—խըն-
ձորը ծառից հեռու չի ընկնի:

Մեր կեանքը լի է բարձր ուսում ստա-
ցած, բարի ցանկութիւններով լցուած ան-
ձերով, բայց գործնական կեանքի համար
միանգամայն անպատրաստ և անպէտք—
ըստ մեծի մասին այն պատճառով, որ նո-
քա իրենց գիտութիւնը, ուսումը, բնաւո-
րութիւնը չեն հիմնել քրիստոնէական ճշ-
մարիտ ուսման վրայ, որովհետև նոցա
կեանքն ու գործունէութիւնը չի բղիտում
քրիստոնէական յաւիտենական զաղափար-
ներից, որովհետև միայն ճշմարիտ քրիստո-
նէական բարոյականութիւնն է կազմում
հիմք հասարակական և մասնաւոր բարեկե-
ցութեան և մարդիկ իրենց ազօտ հասկա-
ցողութեամբ և ուսմամբ չեն կարող ճանա-
չել կամ ըմբռնել այդ ճշմարտութիւնը,
որովհետև քրիստոնէական բարոյականու-
թեան ազդեցութիւնը մարդու մէջ արմա-
տաւորում կամ սկիզբն է առնում այլ մի-
ջոցներով և այդ ազդեցութիւնը չի կարելի
չափել արշիւնով կամ քաշել կշեռքով: Ցան-

կանալով մանուկներին ուսում տալ, մէնք ոչ միայն աշխատում ենք վերացնել ամեն տեսակ արգելքներ, այլ և ստեղծում հնարաւորութիւններ այդ նպատակին հասնելու. ուսուցիչներ ենք վարձում, անհաշիւ դրամներ ծախսում, ազատում նրանց ամէն տեսակ պարտականութիւններից և աշխատանքից և յաճախ մեր սին և ունայն նպատակներին հասնելու համար ամէն ջանք գործ դնում մեր զաւակների համար մի արտօնաթուղթ ձեռք բերելու, ուսերը, ճակատը և կուրծքը պղնձէ արգելով զարգարելու, թէ և ըստ մեծի մասին մեր բոլոր աշխատանքները ջուրն են ընկնում. իսկ հեզ ու համեստ բնաւորութիւն, բարի ու ազնիւ վարքն ու կեանքը—կարծում ենք թէ ինքն իրեն կրգայ մեր զաւակներին զանելու, թէ կուզ հէնց մենք քնած էլ լինենք: Ահա թէ ինչն է ցաւալի, որ մեր այս տեսակ թիւր ու կորստաբեր հասկացողութեան պատճառով մեր կեանքի համար անհրաժեշտը, ամէնակարևորը համարում ենք աւելորդը, անպէտքը, անօգուտը, ժամանակաւորը... ոչ մի ծնող իւր մարմնով տկար և նիհար զաւակի համար չի ասի թէ նրան առողջութիւն պէտք չէ. բայց երբ մանկան հոգին է հիւանդ—պէտք չէ նրան բժշկութիւն—ասում են շատ ծնողներ և այս ա-

մէնից յետոյ նորա համարում և համարձակում են հայրեր կոչուելու ապա ի՞նչ անենք, եթէ սկսենք այդպիսի բաներով զբաղուել աշխարհայինը կամ աշխարհը ձեռքներիցս կրգնայ—ասում են շատ հայրեր: Ո՛չ, յարգելի բարեկամներ, հէնց ամէն բան տալն ու վրայ անողն այդ աշխարհայինն է. խնդրեմ ասէք, ուրքեր են ներկայ կեանքն ու գործերը թոււաւորում և աւերակ դարձնում—նրանք, որոնք ապրում են խաղաղ և համեստ, թէ՞ նրանք, որոնք միշտ և հանապազ ընկած են իրենց անձնակտն քմահաճոյքների և զուարճութիւնների ետևից. նրանք որոնք աշխատում են կրլանել ընկերոջ, հարևանի ունեցածը, թէ՞ նրանք, որոնք բաւականանում են իրենց սեպհականով. մարդասէրները, հեղձրը և անփառասէրները, թէ՞ նրանք, որոնք իրենց եղբայրներից, հարազատներից պահանջում են անկարելին և պատճառ դառնում հազար ու մի անախորժութիւնների—ով իրեն չի բարևում կամ գլուխ խոնարհում... նրանք արգեօք, որոնք զրդշարու, իրենց պակասութիւնները խոստովանելու քաջութիւն և առաքինութիւն ունին, թէ՞ նրանք, որոնք փառք, պատիւ, իշխանութիւն են փնտռում. նրանք, որոնք ճանաչում և դաւանում են մի բարոյական օրէնք, կարգ ու կանոն, թէ՞ նրանք, որոնք

27411

2000

այդ ամէնը ճանաչել անգամ չեն ուզում և իրենց անօրինակ գոռոզութեան պատճառով մինչև իսկ ամօթ են համարում իրենց մարդկանց շարքերում տեսնելու—նրանք, որոնք իրենց ամէնից բարձր են դասում և գնահատում ու ամէն բանի իրաւունքն ու կարգադրութիւնը միայն իրենց վերապահում, թէ՛ նրանք, որոնք իրենց համարում են ամէնաանարժանը, յետինը, որով և շրջանակում կամ չափ ու սահմանի տակ դնում իրենց անմիտ, կամակոր և անզուսպ կրքերը: Առաջինները հասարակութեան այն անգամները չեն, որոնք ուռած ու փքուած մարմնով ծովի փոթորկալից հողմերի մէջ իրենց անզուսպ արարքների պատճառով խորասուզում են ծովի յատակը նրանց, որոնք կարող էին իրենց փրկել. իսկ վերջինները, որպէս խաւարի թագաւորութեան մէջ մի պայծառ լուսաւոր գիծ, որ ծովի գոռ ալիքներին մատնուածներին կոչում է դէպի փրկութիւն—դէպի խաղաղ նաւահանգիստ. սոյնպիսի պատճառներով չէ՞ արդեօք մեր փուշ աշխարհի այսքան վրդովմունքը, հալածանքները, կործանումը, գերութիւնը, ստրկութիւնը, օրինազանցութիւնները, սպանութիւնները և առհասարակ մարդկային կեանքի անթիւ ու անհամար թշուառութիւններն ու շարիքները, ազատութեան խաղաղութեան և սիրոյ չքացումը:

Այո, փիճել պէտք չէ, փոքրերի մատաղ սրտի ու հոգու մէջ կենդանի և հիմնաւոր քրիստոնէական բարոյական գաղափարներ արմատաւորելը—կազմում է մարդկային կեանքի ամէնաամուր հիմքը, անհատական և հասարակական երջանկութեան ամէնալաւ գրաւականը:

Արտաքին և ժամանակաւոր երևոյթներն ու հանգամանքները չեն, որ պէտք է պահպանեն ձեր մանկան. կրթեցէք, դաստիարակեցէք նոցա քրիստոնէական բարոյական գաղափարներով, որովհետև ինչպէս առաքեալն է ասում, զրա մէջն է իսկական հարստութիւնը և փառքը... չպէտք է մոռանալ միևնոյն ժամանակ, որ կենդանի հաւատ դէպի կրօնը կամ դէպի մի որևիցէ բարոյական օրէնք, գաղափար, երկիւղածութիւն դէպի Նախախնամողն—Աստուած ազնւութիւն, սրբութիւն և այլն արմատաւորել մանուկների սրտի ու հոգու մէջ կարելի է միայն խօսքերով կամ յորդորներով. այս նկատմամբ շատ և գուցէ ամէնամեծ նշանակութիւն և ազդեցութիւն ունի մանկան վրայ մեծի, հօր, մօր, ուսուցչի և շրջապատողների կենդանի օրինակը. ի՞նչ ոյժ և նշանակութիւն ունին մեր լաւ խրատներն ու յորդորները, երբ մեր ամբողջ կեանքը, խօսքը և գործը հէնց մանկան աչքի առաջ հակասում է մեր ասածին. փոք-

րերը, ըստ մեծի մասին, փշանում են այն պատճառով, որ նոցա մերձաւորները իրենց անօրինակ արարքներով չնչին և անցողական, ձևական կամ մօղայական բաների վրայ ուշադրութիւն դարձնելով շար և վատ օրինակ են հանդիսանում և մանուկ հասակից վարակում նոցա անմեղ և քնքոյշ սիրտըն ու հոգին: Այս աեսակ ծնողները որդեսպաններից աւելի վատ են, որովհետև նոքա իրենց մանկան հոգին բաժանում են մարմնից և երկուսին էլ գեհենի կրակին մատնում:

Կարգալով մեծ ուսուցչի կրթութեան, դաստիարակութեան վերաբերեալ այս համառօտ խրատները, որ այնպէս խոր և հիմնական կերպով է արժարժել կրթութեան և դաստիարակութեան հիմնական օրէնքները, ակամայից մոռանում ես, որ այս ամէնն ստուած է 4-րդ դարում Կոստանդնուպօլսում:

Լիայոյս եմ, որ Ոսկէբերանի այս ոգեշունչ խօսքերն ու խրատները իւրաքանչիւր ընթերցող, հայր, մայր, եղբայր, քոյր և ընկեր իւր սրտին շատ մօտիկ կը համարէ և կընթանայ քրիստոնէական բարոյական կրթութեան ու դաստիարակութեան ուղիղ, շիտակ և փրկարար ճանապարհով:



ՀԵՂԻՆԱԿԻ ԱԶԽՆՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԸՆԾԱՅՈՒՆԸ

1. Հոովմայեցի էպիկոէտ իմաստասէրի կեանքն ու վարդապետութիւնը 40 կ.
2. Ժողովրդական ընտրութիւններ 10 կ.
3. Ընտանիքի սիւները. . . . 10 կ.
4. Դէպի գեղարուեստի հայրենիքը 40 կ.

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Դաստիարակութիւն
2. Պատերազմը և նրա ապագան
3. Խորտակուած պատանէշ
4. Նդէք երջանիկ
5. Աւետարանի տեսակէտը աշխատանքի և անգործութեան նկատմամբ.
6. Ինչպէս պէտք է ապրի բրիտանեան.

